

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ստորագրել է թէ Ռուսիան կը շարունակէ իւր զին-
ւորական մեծամեծ պատրաստութիւնները :
Կանադէս յայտնի է թէ Անգղիան ևս կը պատ-
րաստուի և գրեթէ պատրաստ է ի պատերազմ
նպաստ Թուրքիոյ , որ իւր կողմանէ ընդհա-
նար զօրաժողով կընէ՝ իւր պատրաստ եղած
զորքանակին պէջ աւելցնելու համար : Բայց
այնպէս այս ամեն զինուորական պատրաս-
տութիւնքն առաւելապէս նպաստամատոյց կը-
նայանք ի կարգադրելի խաղաղութեան շու-
րջ լինելուն քան թէ մօտաւոր պատերազմի
նշան : և այս պարագայիս մէջ ի դէպ է յա-
նալ բերել զվաղեմի լատինական առածն որ
թէ , եթէ զխաղաղութիւն կամիս , պատրաստ
ի պատերազմ : (Սէ վիս բաշիւմ , բարա պէ-
մ) : Իւրովիոյ գլխաւոր լրագիրք ընդհանրա-
պէս , խաղաղասիրական մեկնութիւններ կու-
նան վերոյիշեալ զինուորական պատրաստու-
թեանց , և կարի իրաւամբ . քանզի ինչպէս մեր
խրքնաց թուով ևս զընցած եմք՝ ոչ ոք ի
մտերութեանց՝ ժամանակ չունի պատերազ-
մայ . մանաւանդ որ պատերազմն՝ եթէ տեղի
ենանայ , մեծ ու եւրոպական պիտի լինի , և
չոչաւ ահագին հետեանք պիտի ունենայ :
Այս պատճառաւ է որ ամեն մտերութիւնք ի
սրտէ կը փափաքին և վերջին ճգամբ կաշ-

խտին՝ եթէ կարելի է , խաղաղութեամբ կար-
գադրել զլուծումն Արեւելեան խնդրոյն : Այսու
ամենայնիւ ոչ ոք կրնայ ուրանալ թէ քաղա-
քային ընդհանուր կացութիւնն խիստ դժուար
և փոփոխաւոր է , և փոփոխաւոր կարելի չի
լուծումներ հտրկաւոր են , որպէսզի համաձայնու-
թեամբ և բարեկամական կերպիւ կարգադրուի
այժմեան դժուարութիւնքն :
Ի մայրաքաղաքս հասեալ հեռագրութիւնքն ,
կրտէ լԱ թիթիօ օրագիրն , կը քննադատէ ին
թէ կենցաղագէտ անձանց դատուն և սեղանա-
ւորաց վերայ երկիւղալի տպաւորութիւն պատ-
ճառեր է Ռուսիոյ կայսեր . պատերազմաւոր ա-
տենախօսութիւնն , զոր Մոսկուայի մէջ ըրեր է :
Ըստ տեղեկութեանց ընդունելոյ ի մէջ՝ կը-
յաւելու յիշեալ օրագիրն , Ալէքսանդր կայսրն
սրբոյն Դէորդայ կարգին առպետներն ընդ ու-
նելու առթիւ հետեւեալ կերպիւ խօսեր է .
« Ընդ բոլոր կեանս իմ նուիրեցի զիմ բոլոր
ջանոս արգարութիւն ի ձեռս բերելոյ համար ի
նպատակ Արեւելեան թրիստանէից . բայց դժբաղ-
դարաւ իմ խաղաղասիրական բնութեան չկրցաւ
յաջող փոխան մի ունենալ , այսինքն բաղձա-
ցեալ նպատակին համար : Սյոթմ խորհրդակցու-
թիւն մի պիտի գումարուի ի Կ. Պոլիս , ուր
Ռուսիան պիտի վերանորոգէ իւր ջանքը . որ
եթէ յաջողութեամբ չպսակուի , դէնքն ի ձեռս
պիտի առնուի փոխանալով յօգնութիւն ժո-
ղովրդեան իմոյ » :

Կայսերական այս ատենախօսութիւնն՝ զոր ու-
մանք պատերազմաւոր կանուանեն , ուրիշե-
րուն խաղաղասիրական կերելի : Օրինակի հա-
մար՝ Պրուսիոյ լԱ ՆՈՐ օրագիրն , որ Ռուսիոյ
կառավարութեան բերանն կը համարուի , խա-
ղաղութեան նպաստամատոյց կը գտնէ զյիշեալ
ատենախօսութիւնն , և կը յաւելու թէ Ռուսիան
իւր յատուկ օգտիցը հետամուտ չէ Արեւելքի
մէջ , այլ միայն կը խնդրէ զկատարեալ գործա-
դրութիւնն նոր բարեկարգութեանց , զորս ան-
հրաժեշտ կընկատեն բոլոր մեծ մտերութիւնք :
Փարիզէն հասեալ լրաց նայելով , Ռուսիոյ կա-
ռավարութիւնն իւր հաւանութիւնն տուած է
հիմնական պայմանաց՝ առաջարկելոց յԱնգղիոյ
փան վիճարանութեանց խորհրդակցութեանն ,
որ պիտի գումարուի ի Կ. Պոլիս : Բայց ուրիշ
տեղեկութիւնք կըսեն թէ յիշեալ հաւանութեան
լուրն տակաւին կանխահաս է , թէ և բաղումը
կը հաւատեն թէ Անգղիան պիտի չնշանակէր և
պիտի չյուզարկէր ի Կ. Պոլիս զյատուկ երես-
փոխան իւր փան խորհրդակցութեանն որ պի-
տի լինի , եթէ աներկբայ չլինէր ի վերայ հա-
ւանութեանն Ռուսիոյ : Եւ իրօք Անգղիոյ կա-
ռավարութիւնն արդէն պաշտօնական կերպիւ
ժողոված է մեծ մտերութեանց թէ Սէրիպիւրի
մարքիզն իւր երեսփոխանն պիտի լինի ի Կ.
Պոլիս գումարուելու խորհրդակցութեան մէջ :
Եթէ Լոնտոնի ՄՈՐԻՆԻԿԱՅ—ԲՈՍԹ օրագիրն
խօսքին հաւատ ընծայելու լինիմք , յիշեալ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՁ ԵՆ ՎՇՏԵՐԴ ԶԱՅՍՍՍՆ

Մայր հարազատ , ինչո՞ւ այդպէս քեզ նշմարեմ տխրազգեաց ,
այդպէս դու ըզգեցեր՝ անշուք հանդերձ թախճանաց .
են , ո՞ մայր , արդեօք պատճառք անմխիթար վշտերուդ .
տխրութիւն տայ մեզ կոկիծ , բնէ պատճառ ցաւերուդ :
Ենման է քու գեղութիւն , դու ազգաց մէջ վեհապանծ ,
մեզ նախանձորդ՝ շատ երկիրներ , ճիշդ յիշատակք քո փառաց .
թէ թագուհի երկրի վրայ անուն երբեմն կրեցիր ,
մեզ ծնաք շատ դիւցազներ , բայց հիմ այդպէս վշտակիր .
առ խանձարուր և որորան եղար հանուր մարդկութեան ,
բաւաւ ի քեզ հըրաշալին տակեց զըրախտ փափկութեան .
այժ պատուական քո դպրութիւն , ոսկիահարա՞ քո բարբառ ,
քո խօսեցան Աղամ , Եւա՝ մեր առաջին հայր և մայր :
Կամարիդ վըրայ Աստուած տարածեց զայն ծիւծան ,
Աստուծոյ և Մարդկութեան մէջ ուխտ և նըշան հաշտութեան .
բարձր զըրոց մէջ ունիս յիշուած քառեակ պարճանք մշտնջեան ,
կրտաւ , Տիգրիս , Փիսոն , Գեհան՝ գետք գրախտին եղեմեան :
Կառաջին ծնունդդ եղաւ դիւցազունն Հայկ թորգոմեան ,
այնպիսի իր աղեղով ջնջեց հսկայն Տիտանեան ,
մեզ ունեցար որդիք ընտիր՝ յաւերժական փառք քո Տան ,
քամ , Տիգրան , Արայ , Պարոյր , Վահէ՝ իշխանք հայկազնեան :
Զորդական աշխարհակալք եղան ծընունդք քո երկանց ,
թէ մեծ ոսրոսաի և մեծ նախանձ աղեղեցին շատ աշխարհաց .
Եւ Արտաշէսք քան զԱղէքսանդր Մակեդոնեան թագաւոր ,
զըրաւեց զառաջնութիւն Պարսից Շահին մեծազօր :
Ենքադիր քաջ ունեցար ըզվաղարշակ այրն արհի ,
պատմագիր ունէր իրեն ըզՄարաբաս Ասորի .
Լուսմայեցեաց ահ ներգործող քաջամարտիկ զիւցազուն ,
քառաշէսեան արին Տիգրան՝ յիւր թշնամեաց անըկուն :
Ենքանի արքայն Արգար , անդրանիկ Պետ քրիստոսեան ,
Եթէ չէ՝ քեզ մի մեծ պարճանք , ո՞ր ազգ ունի իր նըմանն .
Ունեցար քեզ պերճ ոսկեգար և Մեկենաս մի հըլօր ,
Մահալ , Մեթրոպ , Վըռամշապուհ , արք հոյակապք փառաւոր :
Հանճարաւոր նոցա սանունք՝ քաջ թարգմանիչք սուրբ Գըրօց ,
Մովսէս քերթող , Դաւիթ Անյաղթ , և ուրիշ շատք քո յորդուց .

Վարդանանց պէս զօրապետներ եղան պաշտպանք կըրօնին ,
Որ Պարսից կեշտ քու աշխարհէդ անհետ ըրին բնաւին :
Արժանաւոր տիկնայք , բամբիջ ունեցար և թագուհիք ,
Նաւարդ , Ալէքէն , Տիգրանուհի , Զարուհի և Սաթլիկի .
Մեծահամբաւ հայրապետներ՝ Վահք անաղտօք և արփիք ,
Գրիգոր , Ներսէս , Սահակ , Յովսէփ , Գիւտ և Օհան և Յուսիկ :
Մեծափարթեմ նախարարներ և պերճաշուք իշխաններ ,
Որ արքայից պէս մեծազօր ունէին ոյժ և փառքեր .
Տիտղոսներուք և պաշտամանց զօրն աստ յիշեմ ես անուանք ,
Մարգարեան , Մարգարեան , Շահապ , Մարապ , Պարոն , Պայլ և Մարաշխտ :
Յօտար ազգաց ասոնց նըման պատուանուններ տուան շատ ,
Կիւրապաղաւ , Կոմս , Մագիստրոս , Դուքս , Վէստ , Պատրիկ և Հիւպատ :
Նախկին ո՞ր փառք և ճոխութիւնք Մօրք ես գըծել կարենամ ,
Ճշգրտապատմութիւն պատմագիրք նըկարեն զայս ամենայն .
Կեց Գրիստոսի կողմէն երկու Առաքեալներ զըկուեցան ,
Սուրբ Թադէոս , Բարդուղիմէոս , առաջին լոյսք քո վեհ տան :
Օտար ազգաց եկեղեցիք են մարդկութեան զիւտք ճարտար .
Իսկ Միաժինն—Եւ ի Հօրէ և հիմնարկեց քեզ տաճար .
Տառք օտարաց՝ մարդոց հընարք , իսկ քու տառերդ՝ բուն Աստուած ,
Հըրաշապէս Մեծնորայ սիրտ ի տեղեանն է դրոյմած :
Հինդիւցազանցդ ո՞ր մէկն յիշեմ , ամենք անգին դահարներ ,
Որ երեսուն դարու շաի քեզ պարգևեցին վայելքներ .
Ո՞ր Մարաշտան , Ասորեստան , ո՞ր Հոռովմայ պերճութիւնք ,
Չըկան . բայց դեռ քու սերունդիդ կան ցարդ բեկորք մընայունք :
Ո՞ր կըլման , կամ ո՞ր երկիր կրնայ կշտիլ քեզի հետ ,
Երկիրդ՝ բերրի , երկիրդ՝ պայծառ , ունիս առատ լիճ և գետ .
Դաշտք և այգիք արտաբոյք , անտառք հովիտք և լեռնք ,
Առատ պլտուղք յառաջ բերին , անթիւ են բոյսքդ ծաղկածինք :
Դարաստք , ծաղկոցք , և բուրաստանք քու աշխարհիդ աննըման ,
Գերադանցեն քան ըզպարտեզ հրաշային Եստերեան .
Արծաթի պէս վըճիտ ջըրոցք և բերքերուդ զանաղան ,
Շատ աշխարհներ նախանձարկու , դուցէ նաեւ իտալեան :
Նախկին փառքերդ և բընատուր ճոխ պարգևներդ յիշելի .
Չեն բոխիկիր , չեն բախանար հապա փառօք քո արդի .
Տես տէրութիւնն հաւատարիմ քու զաւակացդ է չնորհած ,
Մի պատուական յատուկ օրէնք , աղբիւր անհուն բարութեանց :
Այսչափ հարուստ փանքեր ունիս , այսչափ գիտուն և կղեր ,
Այսչափ վարժօք , եկեղեցիք՝ հանդէսք և թերթք լըրարեր .
Պաշտօնեաներ՝ որոց կուրծքերն չըբանըշանք զարդարեն ,

ԱՅԳԱՅԻՆ



ՄԱՀԱԳՈՅԺԻ

Մարդալիքն անձաշուք մահտեոյ Յակոբ Էֆէնտին ցաւալի կորուստ մի ըրաւ՝ կանխահաս մահաւմբ իւր ծաղկահասակ սիրելի որդւոյն Մարտիրոս աղային, որ՝ զկնի երկարատե հիւանդութեան մը անցեալ ամոռ 33ին առ Աստուած փոխեցաւ ի խոր տխրութիւն համակելով զգորովագութ հայր իւր և զորոր Սբարդալիքեան գերդաստանը։ Հանգուցելոյն յուղարկաւորութեան տխուր հանդէսն ի նոյն աւուր կէսօրէն ետե կատարեցաւ փառաւորապէս և ուղեկցութեամբ խուռն բաղմութեան։

—Դարձեալ անագորոյն մահն անխնայաբար յախտակեց ի ծաղիկ հասակի իւրում զյարգոյ կարապետ աղան Մ. Սուլթանեան, աղնիւ ու պարկեշտ երիտասարդ մի, որ ժամանակէ մը ի վեր անբուժելի ախտիւ վարակեալ իւր մահկանացու բնութեայք կնքեց ամոռ 5ին գիշերն դառն և անմխիթար ցաւոց մէջ ձգելով ըզգործաղդ մայր իւր, զեղբայր իւր և զբոլոր Սուլթանեան գերդաստանը։

Վախճանելոյն յուղարկաւորութիւնն ի հետեւեալ օրն փառաւոր հանդիսի կատարեցաւ, որում ներկայ գտնուեցան ազգային և օտարազգի բաղմութիւ հանդիսականք։

Կիմանամբ թէ քաղաքիս Ուսումնական խորհրդոյն գլխաւոր կարգադրութեանց մին եղած է՝ մեր գրաբար լեզուին դասատուութիւնն ընկել ի Մեսրոպեան և ի Հռիփսիմեանց ազգային վարժարանս։ Մեք կարծեմք թէ՛ կամ լաւ ևս է տեսել համազեղ եմք, թէ առանց գրաբար լեզուին քերականութեան սկզբունքն

համառօտ կերպիւ ուսանելու, դժուարին է յոյժ աշակերտաց և աշակերտութեանց՝ դմաքուր աշխարհաբար լեզուն խօսիլ և դրել։ Մեր այս համադման համաժողովը իրենք անա զվարժապետս յիշեալ երկուց սեռից վարժարանաց։ Ուստի կըցաւիմք ի բոլոր սրտէ ի վերայ այս ձախորդորոշման Ուսումնական խորհրդոյն, որ կատարեալ մահ կըպառնայ մեր պարզ գրաբար կանոնաւոր լեզուին ի վիճակին Զմիւռնոյ։

Այժ կըցաւիմք բոլոր ազգասիրաց հետ. քանզի մինչդեռ Հեղինք՝ այսինքն Յոյնք կաշխատին սակաւ առ սակաւ կենդանացնել զվեռեալհին լեզուն իւրեանց, նորա վերայ հիմնելով զաշխարհիկ բարբառն, մեք Հայքս զդիւրուստեանի գրաբար կենդանի լեզուն մեր կամովին չնջել և սպանանել կուզեմք, նորա համառօտ դասատուութիւնն իսկ բառնալով ի դպրատանց։

Շատ անգամ կըտեսնեմք որ մասնաւոր եկեղեցական կամ աշխարհական անձինք՝ մանաւանդ գաւառաց մէջ, իբր թէ վասն շինութեան եկեղեցւոյ մի կամ ի նպաստ ուրիշ ազգային հաստատութեանց՝ դրամական հաւաքումներ կընեն, որոց բոլորն կամ մեծագոյն մասն իրենց անձանց կըյատկացնեն։

Կ. Պօլսոյ ազգային վարչութեան տնտեսական խորհուրդն ի զգուշութիւն բարեմիտ հասարակութեան հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնն հրատարակած է ազգ. լրագրաց մէջ։

«Ժամանակէ մը ի վեր ազգային հաստատութեանց սրպէս թէ ի նպաստ մասնաւոր անձանց կողմէ գանազան միջոցներով դրամական հաւաքումներ տեսած են տեղի ունենալ՝ առանց ազգային Պատրիարքարանի գիտութեան։

Տնտեսական խորհուրդն այս պարագային մէջ ի զգուշութիւն հասարակութեան պարտ կըհամարի յայտարարել ի պաշտօնէ, որ առանց Պատրիարքական կոնգակի և կամ մասնաւոր պաշտօնական արտօնագրի կատարուած այդ տեսակ հանգանակութեանց ինչ նպատակի ծառայելն անձանք չազգա. Պատրիարքարանի»։

Ի Պատրիարքարանի Հայոց, (Տեղի կնքոյ) Կ. Պօլսոյ, 26 Հոկ. 1876։

—Կ. Պօլսոյ ԼՈՅՍ հանդիսին արժաւ, խմբագիր վարդապետին բողոքն ի նկատի առնելով՝ տե՛ս զեկուծիւն խնդրեցինք քաղաքիս ազգային վարչութեանէն, և իմացաք թէ յանցելումն իդմիկէն անցած ժամանակը յիշեալ վարդապետին ճանապարհի ծախք ամենեկին չէ վճարուած յազգային անտուկէն քաղաքիս։

—Մեր լրածին նայելով, կըսէ ՄԱՆՁՈՒՄԷ՛, մի քանի Հայ երեւելի վաճառականք թոյլտուութիւն ստացեալ են ի Բ. Դրանէ՝ որպէսզի երկու շտգենաւ բանեցնեն՝ Սիւ—ժովէն մինչև ի Մարտիկա երթեւեկութիւն ընելու համար։

—Բաղում մխիթարութեամբ կըլսեմք, թէ Մշոյ չըջկաններն գործուած աւաղակութիւնքն և զանազան եղեռնագործութիւնքն բոս մեծի մասին, դադարած են՝ Լըզրումի կուսակալ վսեմ Սամիհ փաշային մարդասիրական ազգուն խնամքն։ Ուստի կըյուսամք թէ քիչ ժամանակուան մէջ բոլորովին կըդադրին, և Մշոյ գաւառին բնակիչք, որոց մեծագոյն մասն Հայ է, ամենայն սպասովութեամբ իրենց մշակական գործոցը զբաղելով, ի բոլոր սրտէ աղօթող կըլինին առ Աստուած վասն երկար կենաց մեր առատագութ Սուլթանին։

—Ազգային լրագիրք կըճանուցանեն թէ գերապետիւ Հ. Եղուարդ Հիւրմիւղեան ծերունազարդ վարդապետն, որ հռչակաւոր հանդիսացեալ է իւր գրաբար վսեմ գրչոյն և իւր գերապանծ թարգմանութեամբքն, անցեալ Հոկտեմբերի 26ին առ Աստուած փոխեալէ ի Հռոմ մայրաքաղաքի։

—Մեր նախնիքաց թուոյն չորրորդ երեսին երկրորդ էջը՝ վենետիկոյ ԲԱՉՄԱՎԷ՛ՊԷ՛Ն յառաջ բերուած տողից մէջ Մահմետականաց թիւը՝ մոռցուած լինելով, արժան կըհամարիմք վերստին յառաջ բերել զիշեալ տողերն։

«Գլխաւոր երեք կրօնք կըտիրեն օսմանեան պետութեան մէջ. մահմետականութիւն, քրիստոնէութիւն և հրէութիւն։ Մահմետականք կրօնքով կեցին 21 միլիոն։ . . . Իսկ յունադաւանք՝ 13 միլիոն են, հայադաւանք 2 1/2 միլիոն, կաթոլիկք (ի զանազան ազգաց) 900, 000, և Հրէայք 150,000»։

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Ձեռագիր ընդարձակ Պատմութեան Երեսօրագիր Զոր գրեաց պատուելի Տիգրան Հ. Թ. Սափաւեանց գլխաւոր նախկին դասատու ժողովաւորաց պրոքի եւ նախկին քարտուղար Պատրիարքարանի պրոք Յակոբեանց վաւագն Ս. Երուսաղիմի։

(Շարունակութիւն եւ վերջ։)(1)

247. Աղմուկը ի մէջ կուսակցութեանց։ Անօգուտ ջանք ներդրութեան Զիլինկիրեանի յաղաքս խնդրոյ նշովից։ Մերժումն քուէից Միաբանութեան. Բողոքագիրք նորին ընդդէմ Մամլոյ։ Որոշումն առաքելոյ հրաւիրակ յերուսաղէմ. հակառակ որոշումն ընդ այն՝ կրօնական ժողովոյն։ Խառն ժողով, յորում որոշի առաքել զհրաւիրակն։ Անօգուտ ջանք իսահակայ և այլոց՝ յարդեղել վերջի հրաւիրակին։ Զհետ փութալ նորին՝ Յակոբ վարդապետի։ Անցաւորութիւն պաշտօնի հրաւիրակին, և դարձ նորա ընկերութեամբ Զիլինկիրեանի. (1861)։

248. Շարայարութիւն։ Անօգուտ ջանք չբաւարելոյ ընդհանուր ժողով։ Խորհուրդ խափանելոյ զՄեղու։ Կրկնութիւնք խառն ժողովոյ, յորս ջանք լինին արտաքուստ ընտրել ըզգործարարք։ Արիւտում Պալիեան։ Զիլումն և խորագիտութիւն ատենապետին։ Դիմագրութիւն Յակոբ Պատրիարքի. (1861)։

249. Չանք Միաբանութեան ի բարեկարգել զուրք։ Աթոռն։ Անհաւատարմութիւն ոմանց անշայ։ Դարձ նորապետի եպիսկոպոսաց։ Կաթակտ եպիսկոպոս կորդի փակակալ Ս. Եկեղեցւոյն։ Վախճան Յակոբ Պատրիարքի յերուսաղէմ։ Թողու Ս. Աթոռոյն զպատրիարքուն Վախճանեալ առանց մահարձանի. (1861 1863)։

250. Պաղլոս Պատրիարք և սկզբունք նորա ի

վարչութեան։ Զեղծումն ազգային Սահմանադրութեան։ Նոր հրահանգ առաքեալ յերուսաղէմ՝ վասն ընտրութեան տեղապահի։ Որոշումն պաշտօնի նորա։ Ժողով յերուսաղէմ և ընտրութիւն Յակոբ եպիսկոպոսի Յամթեղոյ ի տեղապահութիւն։ Կանոնք ժողովոյն. տեղեկագրութիւն նորա։ Կրկին ժողով, յորում ընտրի տեղապահ վրթանէս վարդապետ։ Երրորդ հրահանգ վասն ընտրութեան Պատրիարքի։ Տեղեկագրի առ վարչութիւնն։ Ժողով ի Կ. Պօլսո և ընտրութիւն Եսայեայ ի պատրիարքութիւն. (1864)։

251. Կատարինէ սարկաւադուհի Ղորղանով։ Նորդութիւնք ի Ս. Գաղաքին։ Յոյնք փորձ փորձեն արեւելարտաքնոյ դրան տաճարի սուրբ Յարութեան։ Վէճք ի Բէթլէէմ ի մէջ Միաբանաց Հայոց և Յունաց վասն պատկերի և աւելածութեան։ Այցելութիւն Աթոռ ի իշխանին Անդղիոյ և Շամլորի դքսին Պուրպուրեան, և դքսին Մոդենայ ի քաղաքն սուրբ. (1864 1865)։

ԳԼ. Ը. Ի դահակաւութենէ Եսայեայ՝ մինչև ջամն 1872։

252. Դարձ Եսայեայ ի Ս. Էջմիածնէ։ Հանգամանք անձին. ուսմունք, և ուղեւորութիւն նորա յԵւրոպ նախքան զպատրիարքութիւնն։ Դադարումն տարեկան տրոց որ յանուն ճեմարանի։ Էլանէ Եսայի յերուսաղէմ։ Զեռնարկութիւնք նորա։ Տկարութիւն նորա ի հաստատել կանոն վասն դպրանոցին։ Սիոն, հանգէս պարբերական, և զեղծումն նորին։ Զեղծանել Եսայեայ ի անտեսութեան Ս. Աթոռոյն։ Պարտք և աղբիւրք նոցա։ Դործարանք արուեստից։ Նոր ստացուածք երկրականք. շինութիւնք։ Տուն թումայ Առաքելոյ։ Նուիրակութիւնք արդիւնք նոցա. (1864—1868)։

253. Խնդիր քառանկից Այրին, և դատք վասն այնորիկ։ Հ. Հռեմիճիոյ Բուզէլլի։ Մա-

րախք. Մաղձախտք։ Խնդիր դերեղմանատան Սիոնի։ Նորդութիւն գմբէթի Ս. Յարութեան տաճարի։ Երթ Իսահակայ եպիսկոպոսի և տիմոթէոս վարդապետի ի Հապէշտան։ Պատճէն նամակին Եսայեայ առ Դաւրէնտըն կոմս. (1865—1870)։

254. Երթ Եսայեայ յեգիպտոս։ Ընթացք նորին անդ։ Անցաւորութիւն կալուածական և թեմական խնդրոց։ Դարձ նորա սրտաբեկ յետս։ Իգնատիոս և Սիմոն եպիսկոպոսներ եւ լանեն անդ ի քննութիւն և ի կարգադրութիւն յիշեալ խնդրոյն։ Վերջին որոշումն նորին. ընտրութիւն և հաստատութիւն Մեսրոպ եպիսկոպոսի ի պաշտօն առաջնորդութեան Եգիպտոսի, ընդ իրաւասութեամբ Պատրիարքին Կ. Պօլսոյ. (1867)։

255. Խափանումն պատարագին Լատինաց ի Ս. Յակոբ և ի Ս. Փրիլիչ։ Այրումն Ս. Այրին Բէթլէէմի. յորմէ գողանան և պատկերք Հայոց։ Դալուսա Միւնիք Էֆէնտոյ, և խորհուրդ վասն խնդրոց Ս. Տեղեաց։ Անկումն կարապետ եպիսկոպոսի ի փակակալութենէ և յաջորդել իսահակ եպիսկոպոսի։ Այցելութիւնք Ամետէ իշխանի իտալիոյ, փրեմերի. Դուլիէմոյ՝ որդւոյ թագաւորին Բուսիոյ, և Յովսէփայ փրանկիսկոսի կայսեր Աւստրիոյ։ Երաշտութիւն և տաղանադք վասն այնորիկ. ջանք ի գիւտ կենդանի չրոյ։ Շինութիւնք ճանապարհաց. (1867—1871)։

256. Ընդհանուր տեսութիւն պատմական ի վերայ Ս. Գաղաքին և պատրիարքական Աթոռոյն։ Արդի վիճակ կառավարութեան վանացն Ս. Յակոբայ։ Նոր կանոնադրութիւն։ Մաքիաւթութիւն Սիմոն եպիսկոպոսի. անարդանալ նորա առաջի միաբանութեան և խուսափումն ի Ս. Գաղաքէն։ Նուաղութիւն հեղինակութեան Եսայեայ։ Ընթացք նորին հակառակ հանդիսաւոր երգմանն։ Վախճան պատմութեանս. (1872)։

(1)Տես գրքսն 4047, 4048, 4049, 1050, 1051 և 1052։



ՀԱՐԱՆՆԵՎԱԾՆ ԱՐԵՏԱԼՈՒԻՐ

Յնձայի սրտիւ կը ծանուցանեմք թէ 'ի մայրաքաղաքն Ճավայու 'ի Պաղարիս' անցնելու հոգիւ ամսոյն 2—14ին յեկեղեցին Հայոց տեղի ունեցաւ հանդէսն օրհնութեան պատկի և ամուսնութեան յարգոյ պարոն Յ. Մ. Յովհաննէսի՝ պատուաւոր վաճառականի նոյն քաղաքին՝ ընդ համեստափայլ Բէրինէ օրիորդին՝ շնորհալի դստեր մեծաշուք պարոն Յովհաննէս Յարութիւնեան, որ ընդարձակ կալուածոց տէր անդառնալիս ու ազնիւ երեւելի անձն մի է, 'ի Պաղարիս հաստատեալ:

Այս բերկրալի առթիւ զշնորհաւորական անկեղծ խնդակցութիւնս մեր յայտնելով հեռաբնակ պատուական բարեկամաց մերոց՝ Յովհաննէս Յարութիւն և Յ. Մ. Յովհաննէս պարոնաց, երկար կեանք և բարօրութիւն կը բարեբաղձալ ըստ յայտնալ սիրաշաղկապ լծակցաց:

ՁԱՆԱՁԱՆ ԵՆԻՐԻՐ

Զմիռնիս, 13 Նոյեմբեր:

Բոլոր հասարակութիւնն և մասնաւորապէս Հայ ժողովուրդը մեծ գոհունակութեամբ և հաճութեամբ սրտի խմացան մեր քաղաքակից մեծաշուք ետսին—Պէյլին ոստիկանութեան տեսուչ կարգուիլն: Բարեբաղձոյ, արդարասէր և գործունեայ յիշեալ գլխաւոր պաշտօնակալն հասարակութեան համակրական սէրն և բարի համարումն ստացած է 'ի վաղուց անսիւ: Քանզի իւր անստգիւտ և բարեկան ընթացից ապացոյցներ արդէն տուած է երբ առաջին անգամ այս կարեւոր ու ծանր պաշտօնն վարեց 'ի քաղաքին քանի մը տարի: Ուստի քաջայայտ եմք թէ մեծաշուք ետսին—Պէյլին ոստիկանական տեսուչութեան օրովն հասարակութեան ապահովութիւնն կարելի եղածին չափ, գոհացուցիչ պիտի լինի:

Այսպիսի միջոցառական և բարեկոյս վստահութեամբ լի, քաղաքին գլխաւոր բնակիչք բազմաթիւ ստորագրութեամբ շնորհակալեաց ուղերձ մի մատուցին մեր բարեգութիւն կուստ:

ՅԱՒԵԼՈՒԱԾԻ

- Ա. Տեղագրութիւն հին երուսաղէմի:
- Բ. Թէ առաջին շինութիւնք եկեղեցեաց ի Ս. Տեղիս եղն ի ձեռն Հեղինեայ կնոջ Արքայու:
- Գ. Թէ Հեղինէ եր դիտոյ Հայոց, հաւատացեալ ի Բրիտանս, և ոչ հրէացեալ ըստ արտաքին պատմաց:
- Դ. Խորայեղացիք, և ծագումն նոցին:
- Ե. Բոլորն Ա և Բ, և ամուսնութիւնք նոցա ընդ Հայ իշխանահայաց:
- Զ. Տապանաբերք պատրիարքաց և նշանաւոր վարդապետաց Երուսաղէմի:
- Է. Յաղագս ապագեաց Տաճարականաց:
- Ը. Յաղագս տաճարին սուրբ Աստուածածնի թէ էր Հայոց:
- Թ. Կոնստանդնուպոլսի Պատրիարքի:
- Ժ. Պատմէն կոնստանդնուպոլսի ժողովոյն Կ. Պոլսի ուղղեալ առ Միաբանութիւնն ի գալ Գրիգոր Պատրիարքի ի Ս. Աթոռն:
- ԺԱ. Յաղագս եկեղեցւոյն Ս. Թեոդորոսի:
- ԺԲ. Վերնագիրք յիշատակարանաց, խաչաքարից և շինուածոց որ գտանին ի մէջ վանաց սուրբ Յակոբայ, սուրբ Հրեշտակապետի և Ս. Եննիքեան:
- ԺԳ. Թարգմանութիւն հրովարտակի Սուրբան Ապոստոլ—Մէհիտ կայսեր՝ առ ամենայն ազգս հպատակ տէրութեան իւրոյ. տուեալ ի 25 Մարտի 1853:
- ԺԴ. Տարեկան հանդէսք Հայոց, Յունաց և Պրանկաց, որք կատարին ի տաճարի սուրբ Յարութեան:

կալ վսե. Սաղրի փայտին, որ հաճեցաւ մարգարտարար նահանգիս ոստիկանութեան տեսուչութիւնը յիշեալ մեծաշուք անձին յանձնել:

—Բարձրագոյն Սեփեւորդոսին կողմանէ շրջաբերական հրամանագրեր յուղարկեցան առ բոլոր կուսակալութիւնս տէրութեան 'ի մասին ընտրութեան երեսփոխանաց, որք՝ ինչպէս յայտնի է, մի մի աթոռ պիտի ունենան ընդհանուր երեսփոխանական ժողովոյն մէջ որ ըստ նոր կայգադրութեանց, պիտի գումարուի 'ի Պոլսի: Յիւրաքանչիւր կուսակալութիւնէ պիտի յուղարկուին հինգ երեսփոխանք 'ի զանազան հասարակութեանց, ըստ բազմութեան թուոց նոցին: Իսկ առ մեր ընդհանուր կառավարին ուղղեալ հրահանգին համեմատ մեր վիլայէթին մէջ հինգ երեսփոխանք պիտի ընտրուին, յորոց երեքն մահմէտական և երկուքն ոչ մահմէտական պիտի լինին: Իւրաքանչիւր երեսփոխանին 3000 զուրուշ ամսական պիտի վճարուի 'ի Բիրանէ, բաց 'ի ծախուց ճանապարհին, զոր գաւառական տեսուչն պիտի հատուցանէ:

—Յանցեալ շաբաթու 'ի Բ. Դուռն արտաքայ կարգի մեծ ժողով մի գումարեցաւ, ուր զինքն բազում վիճարանութեանց որոշուեցաւ ընդունել զխորհրդակցութիւնն մեծ տէրութեանց, որ պիտի լինի 'ի Կ. Պոլսի: Միանգամայն որոշուեցաւ որ երեք գլխաւոր պաշտօնատարք՝ իւրեւ երեսփոխանք 'ի կողմանէ Բարձրագոյն Դրան՝ ներկայ գտնուին 'ի նոյն խորհրդակցութեան: Ըստ տեղեկութեանց հրատարակեցոյ 'ի Թուրք լրագրէ միոյ, յիշեալ երեք պաշտօնատարքն են Միհաթ փաշան, արտաքին գործոց տեսուչ Սալիֆէ փաշան և Հալիլ Շէրիֆ փաշան:

—Կ. Պոլսոյ գաղղիարէն լրագրոյ մը մէջ հաճութեամբ սրտի կընթեռնուած գտնուեալն:

«Յանուցինք զհրաժեշտն Օտեան էֆէնտինն ըստ իթթի ՀԱՏ լրագրոյն: Կիմանամք այժմ թէ հասարակաց շինուածոց պաշտօնատան խորհրդակցան (այսինքն Օտեան էֆէնտին) ետ կառնու զհրաժարական իւր: Կըհաւատան մեզ նաև թէ ամսական թուան նորա կըկնապատկեցաւ»:

—Յանցեալ խալա խալիֆան ՊԱՍԻՐԷԹ անուն թուրք օրագիրն յաշնդելով իւր յանցանաց թողութիւնն ստանալ 'ի Բ. Դրանէ, սկսաւ վերստին հրատարակուիլ:

—Անգղիոյ Պրինկհամ քաղաքէն ամսոյն 11—23էն յուղարկեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ, հացկերութի մի առթիւ ներքին գործոց նախարարն ատենախօսութիւն մի ընելով իւր յոյն յայտներէ թէ 'ի Կ. Պոլսի գումարուելի խորհրդակցութիւնն պիտի յաշնդի դադարեցնել զսովորութիւնն բռնաբարելոյ զհաստատեալ դաշնագրութիւններն:

—Դարձեալ, Բէրէրսպոլսէն ամսոյն 10—22 էն արձակեալ հեռագիր մի իմաց կուտայ թէ Կորդչաքօք իշխանն նոր հեռագիր մի յուղարկել է Տէրպի լորտին 'ի Վստոն:

—Բարձրագոյն Դուռն արդիւնց զմուռն 'ի Կ. Պոլսի՝ ՄԷՐԱԹ—ԷԼ—ԱՀՎԱԼ անուն արապերէն լրագրոյն, որ կը հրատարակուի 'ի Լոնտոն 'ի սակաւ ժամանակէ հետէ:

—Հեռագիրն կը ծանուցանէ թէ Պրաղիլոյ կայսրն և կայսրուհին 'ի Կիպրոս կղզին հանդիլելէ ետեւ 'ի Յոպպէ հասեր են:

—Օգոստոսիա Չարն Լիվալիայէն մեկնելով արդէն հասած է 'ի Բէրէրսպոլսի: Ուր զօրահանգէսի մը արթիւ նորին վեհափառութիւնն իւր խօսքն զինուորական պաշտօնակալաց ուղղելով ասաց, «Կըկապուիմք լուադոյն յաշնդութիւն վանն ընդհանուր հրամանատարաց զօրաբանակին»:

—Լսածնուս նայելով՝ վրաստանի և իմբէթի բարեկանամ Առաջնորդ գերա. տէր Գաբրիէլ Այվազեան սրբազանն անցեալ Հոկտեմբեր 6ին մեկնեալ է 'ի Ս. Էլմիածնէն վանն վերադառնալոյ յառաջնորդական աթոռ իւր 'ի Տֆիլիս:

—Դրեն մեզ 'ի Կալիֆայէ ընդ ամսաթիւով 5 Հոկտեմբեր տուած թէ Պարսկաստանի և Հնդկաստանի Առաջնորդ գերա. տէր Գրիգորիս սրբազանն 'ի մօտ աւորոս ունի մեկնել 'ի յիշեալ մայրաքաղաքէ վանն 'ի Պաղարիս գնալոյ յայցեալութիւն հոգեւոր հօտին իւրոյ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակն մինչև 330 զուրուշի վաճառելէ ետեւ, Կիներն քիչ մը իջան, և այս շաբաթու 1000 հակէն աւելի վաճառեցաւ 317—320: Կենդինարն՝ մեքենայով մաքրուած բամպակն, և 290—300 Ամանայինը:

Աֆիօնն միշտ գլխավաճառ է. անցեալ և այս շաբաթու գրեթէ 250 կողով վաճառեցաւ 185էն մինչև 200 զուրուշի առ չէրին: Գնոյ առեալ այս աֆիօնից խիստ մեծագոյն մանն Ամերիկայի համար է: Ի շուկայի մերումաւայժ միայն 1100 կողով պատրաստ աֆիօն գտանի: Փալամուտն միշտ կուզուի թէ և նոր փոփոխութիւն մի չեղաւ գնոյնը:

Տորոնթ թոյլ է, և այս շաբաթու 215 քուրձ վաճառեցաւ 112 զուրուշով առ կենդինարն:

Մուսան 'ի հանդարտութեան գտանի 'իլպատառս պակասութեան նաւուց վանն բեռնաւորելոյ: Այսօրուան արժէքն 102—103 փարա է օլման:

ԾԱՆՈԹՈՒԹ

ՄԱՆՐ ՎԷՊԵՐ ՈՒ ԴԱՍԵՐ

Քաղաւած մանր տղոց համար:

Ուրաւալ 186 երեսներէ բաղկացեալ այս դատագիրքն, զոր մեր քաղաքակից յարգոյ Մ Մամուրեան գրագետն ծաղկաբաղ աշխատագիրած է, ընտիր բարոյական խրատներ կաւանդէ եւ նպատակ ունի բարեսրտութեան, գործունէութեան եւ պարկէշտութեան յորդորելու գնանկովին: Ուստի ամեն ծնողը՝ որ իրենց զեռափրիք գաւառիկները գործարձութեամբ կրթելու փափաք ունի, ինչպէս նաեւ իւրաքանչիւր դատաւարակ մանր տղոց՝ պարտին մէկմէկ օրինակ ունենալ այս դատագիրքին. որոյ գինն 4 1/2 ֆրանք է:

Զմիռնա, տպագրութիւն Տեռեան, 1876

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց կաթողիկէ և առաքելական տաւր եկեղեցւոյն:

Այս պատուոսկան մատենին՝ բաղկացեալ յութեալ 92 երեսաց, աշխատութեալ է 'ի գիտնական վարդապետէ միոջ 'ի միաբանութեան սրբոյ Էջմիածնի՝ 'ի պատասխանի «Արք. Ս. Պետրոսի (Ս. Պաբլապետի» անուանեալ գրոցն, որոյ իբր 'ի հաստատութեան գերիշխանութեան Պապին յառաջ բերած անհիմն եւ անտեղի պատճառներն կցնեքք գորաւոր փաստերով եւ Ս. Ս. Եւտարանի ու Ս. Պաբլոյ վկայութեամբ: Ս. Պապին եկեղեցւոյն պաշտպան այսպիսի գրոյն մի՛ հարկ եւ արժան է որ իւրաքանչիւր Հայոքով գտնուի իբրեւ բարոյական գորաւոր գին մի ընդդէմ ներքին եւ արտաքին բնական եկեղեցւոյ մերոյ:

Կըվաճառի 'ի գին կէս ֆրանքի 'ի Զմիռնա՝ 'ի գրատունն Արշալուստի եւ 'ի Կ. Պոլսի՝ Ս. Դ. եւ Եւգենիան գրավաճառաց խանութն:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անգամ մը՝ շաբաթ օրը կը հրատարակուի: Տարեկան գինը 120 զուրուշ է ող զրամով, կանխիկ վճարելի: Գուրս երթալու լրագրաց ճանապարհի ծախքը՝ անողին վերայ է: Ո՛վ որ կուզէ, կրնայ բաժանորդ գրուիլ Զմիռնիս՝ Արշալուստի գրատունը. իսկ ուրիշ քաղաքաց համար, ահա կընշանակեմք լրագրոյ մեծաւոր գործակալաց անուանքը, որք են:

- Կոստանդնուպոլսի՝ Հ. Ս. Աւաճանեան էֆէնտի, Տնօրէն և Տէր Փոնք լրագրոյն:
- Ալեքսանդրիա՝ աղա Միքայիլ Հալպեան:
- Գոհար՝ Խալիլ Խալիլ աղա Միքայիլ:
- Յոպպէ՝ աղա Սիմոն Ս. Մուրատեան, փոխ—հիւպատոս Գերմանիոյ:
- Բէրէրսպոլսի՝ Խաչատուր սարկուսաղ Խանթարեան Մոսկուա՝ պարոն Զարմայր Մսիսեան:
- Հալիպոլ՝ Ս. Խաչատի Խաչատուր Խաչատուրեան:
- Պաղատա՝ Անգղոյ հիւպատոսի փոխանորդ, աղա Միքայիլ Մահմետ Միքայիլ:
- Կաթողիկէ՝ պարոն Մ. Խ. Յովակիմեան:
- Մատրաս՝ պարոն Անդրէաս Սամ:
- Պաղարիս՝ պարոն Մանուկ Որդանեան:

Խմբագիր—տէր լրագրոյն, Գ. Լ. Գ. Պաղարիս:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ